Դատարանն արձանագրում է, որ հրայցվորը պահանջել է անվավեր ճանաչել մրցույթի հայտարարությունը, սակայն պահանջը հիմնավորող որևէ փաստարկ չի ներկայացվել: Այսինքն՝ ներկայացվել է պահանջ առանց փաստական հիմքի. հայցվորի ներկայացրած բոլոր փաստարկները վերաբերում են հրավերի իրավաչափությանը, նման պայմաններում Դատարանը գտնում է, որ այս մասով պահանջը ենթակա է մերժման:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Դատարանը, հաշվի առնելով, որ հայցը ենթակա է մասնակի բավարարման, իսկ հայցվորը հայց ներկայացնելիս օրենքով սահմանված կարգով վճարել է պետական տուրքի գումարը, գտնում է, որ պատասխանողից հօգուտ հայցվորի ենթակա է բռնագանձման 60.000 ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարված պետական տուրքի գումար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-րդ, 109-րդ, 189-րդ, 191-րդ, 192-րդ, 198-րդ, 360-րդ, 362-րդ հոդվածներով, 27.2-րդ գլխի կանոններով ՝ Դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

1. «Էքսպորտ Օյլ» ՍՊԸ-ի հայցն ընդդեմ «Երևանի Ավտոբուս» ՓԲԸ-ի՝ ԵԱ-ԷԱՃԱՊՁԲ-24/35 ծածկագրով ընթացակարգի հայտարարությունը և հրավերն անվավեր ճանաչելու պահանջի մասին, բավարարել մասնակի.

1.1. Անվավեր ճանաչել «Երևանի Ավտոբուս» ՓԲԸ-ի՝ ԵԱ-ԷԱՃԱՊՁԲ-24/35 ծածկագրով ընթացակարգի հրավերը:

1.2. Մնացած մասով հայցը մերժել:

2 «Երևանի Ավտոբուս» ՓԲԸ-ից հօգուտ «Էքսպորտ Օյլ» ՍՊԸ-ի բռնագանձել 60.000 ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարված պետական տուրքի գումար:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Վճիռը կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան հրապարակման օրվանից մեկամսյա ժամկետում:

Դատավոր՝ **Կիմա Արզումանյան**

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am